



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Հին Խնձորեսկ (1974), Հ. Ավետիսյան

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

**ԽՆՁՈՐԵՍԿ, ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ, ՀԱՐԹԱՇԵՆ ԵՎ
ՔԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

Այս հետազոտությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և կարող է չարտահայտել ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Վերլուծության իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Հարթաշեն և Քարաշեն համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2013 թ-ի հոկտեմբեր ամսին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ Գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, խմբի հավաքագրում:
- ⇒ Համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում:
- ⇒ Առկա արժեզրեանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում:
- ⇒ Աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար:
- ⇒ Արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում:
- ⇒ Նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում:
- ⇒ Ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում համայնքների ակտիվ դերակատարներին:

Բովանդակություն

Վերլուծության իրականացնող կառույց	2
1. Համայնքներ	4
1.1. Հարթաշեն	4
1.2. Խնձորեսկ	4
1.3. Ներքին Խնձորեսկ	5
1.3. Քարաշեն	5
2. Տնտեսության ճյուղերի վերլուծություն	6
3. Համայնքների մրցակցային առավելությունները	7
3.1 Մրցակցային առավելություններ	7
4. Անասնապահության վերլուծություն	8
4.1 Ընդհանուր տվյալներ	8
4.2. Շուկայի վերլուծություն	9
4.3. Կաթնամթերքի արտադրության արժեզրթայի սխեմատիկ պատկեր	10
4.4. Մատակարարների հետ հարաբերություններ	11
Անասնաբուժական ծառայություններ	11
Խտացված կերերի վաճառք	12
Սարքավորումներ	12
Մարդկային ռեսուրսներ	12
Անասնակերի հավաքում	13
4.5. Անասնապահության ոլորտում ծախսային հաշվարկ (20 կով)	14
5. Ոչխարաբուծություն	16
6. Անասնապահության արդյունավետության բարձրացման հնարավորություններ	17
6.1 Լիակթում և ցանովի խոտհարքերի տարածքների ավելացում	17
6.2. Հեռագնա արոտների և արոտավայրերի արդյունավետ օգտագործում	18
6.3 Կաթնատու տոհմային անասունների բուծում և ծնելիության պլանավորում	19
6.4 Կաթի մթերում, կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն	20
7. Նախաձեռնություններ կաթնամթերքի արժեզրթայում	21
8. Հողագործության վերլուծություն	22
9. Նախաձեռնություններ հողագործության ոլորտում	24
10. Զբոսաշրջության վերլուծություն	25

1. Համայնքներ

Գորիս - Ստեփանակերտ մայրուղու հարևանությամբ են տեղակայված Հարթաշեն, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ և Քարաշեն համայնքները: Համերաշխությունը, համագործակցությունը և համատեղ աշխատանքն ու բարիքների ստեղծումն է այս համայնքներում ապրող բնակչության հիմնական բնութագիրը:

Այս տարածքում ապրող բնակչությունը, սկսած 18 -րդ դարում Դավիթ Բեկի գլխավորությամբ ազատագրական պայքարից մինչև Լեոնային Ղարաբաղի ազատագրում, սովորել է լեոնային բարդ տեղանքը հմտորեն օգտագործել ինչպես բնակության ու աշխատանքի, այնպես էլ ինքնապաշտպանության համար:

Բոլոր չորս համայնքներում բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

1.1. Հարթաշեն

- Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 79 կմ,
- համայնքի կենտրոնի հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 14 կմ,
- համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ,
- համայնքի կարգավիճակը՝ սահմանամերձ:

Հարթաշենը հիմնադրվել և կառուցվել է 1965-70 ական թվականներին՝ Այգեձոր, Ազատաշեն և Չորաշեն գյուղերի բնակիչների կողմից: Այդ գյուղերում կան բնական քարայրեր, խաչքարերով զերեզմանոցներ, եկեղեցիների ավերակներ: Կառուցվել է հարթավայրում, այստեղից էլ նրա Հարթաշեն անվանումը:

1.2. Խնձորեսկ

- Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 78 կմ,
- համայնքի կենտրոնի հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 13 կմ,
- համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1580 մ,
- համայնքի կարգավիճակը՝ սահմանամերձ:

Խնձորեսկը գտնվում է Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց աջ, խորը ձորի զառիթափի լանջերին և սարահարթի վրա: Նոր Խնձորեսկը կառուցվել է 1950-ական թվականներին:

Հին Խնձորեսկը եղել է Արևելյան Հայաստանի ամենամեծ գյուղը, 19-րդ դարի վերջին նրա բնակչության թիվը մոտ 4200 էր, իսկ 20-րդ դարի սկզբներին՝ 8300 (շուրջ 1800 տնտեսություն՝ բազմամարդ ընտանիքներով): 1913թ. ուներ 27 խանութ, 3 ներկատուն, կաշվեգործական արհեստանոցներ, 7 դպրոց:

Խնձորեսկը, ըստ ավանդության, կառուցված լինելով խոր ձորերի մեջ՝ նախապես անվանվել է Խոր ձոր կամ Խորձորեսկ, որը հետագա ձևափոխությամբ դարձել է Խնձորեսկ:

1.3. Ներքին Խնձորեսկ

- Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 86 կմ,
- համայնքի կենտրոնի հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 21 կմ,
- համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1540 մ,
- համայնքի կարգավիճակը՝ սահմանամերձ:

Հիմնադրվել է 1983թ. սեպտեմբերին՝ Խնձորեսկ գյուղի ապախոշորացման արդյունքում:

1.3. Քարաշեն

- Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 81 կմ,
- համայնքի կենտրոնի հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 16 կմ,
- համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1540 մ,
- համայնքի կարգավիճակը՝ սահմանամերձ:

Քարաշենը պատմական աղբյուրներում հիշատակվում է միջնադարից: Գյուղում պահպանվել են 16-17դդ. եկեղեցի, 13-15դդ. գերեզմանոցներ: 1920թ-ին Քարաշենում կազմավորվել է կոմկուսի առաջին սկզբնական կազմակերպությունը (բջիջը):

Աղյուսակ 1.1. Համայնքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

	Հարթաշեն	Խնձորեսկ	Ն. Խնձորեսկ	Քարաշեն
Բնակչություն	757	2300	184	565
Տնային տնտեսություններ	155	526	52	138
Վարելահող	806 հա	1583 հա	474 հա	460 հա
Խոտհարք	47 հա	273 հա	3 հա	80 հա
Արոտավայր	812 հա	2905 հա	88 հա	372 հա
Խոշոր եղջերավոր	1054	4485	366	803
• որից կովեր	509	2150	160	422
Մանր եղջերավոր	980	6500	875	3127
Կոմբայն	1	12	1	1
Թրթուռավոր տրակտոր	5	10	2	2
Այլ տրակտոր	7	50	4	3
Խոտհնձիչ տրակտոր	3	13	1	2
Բեռնատար ավտոմեքենա	24	40	12	18

2. Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտե՞ղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտե՞ղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա.

Ռազմավարական ճյուղեր

⇒ **Խոշոր եղջերավոր անասնապահություն և ոչխարաբուծություն**

Խոշոր եղջերավոր անասնապահությունը և ոչխարաբուծությունը այս համայնքներում բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է: Անասնապահության զարգացման համար համայնքներն ունեն նպաստավոր բնակլիմայական պայմաններ և բավարար քանակությամբ

ռեսուրսներ: Օգտագործում են նաև հարևան համայնքների մեծաքանակ ազատ հողային ռեսուրսները:

⇒ **Դաշտավարություն**

Դաշտավարությունը ավանդաբար զարգացած է եղել այս համայնքներում: Համայնքներում հիմնականում աճեցվում են հացահատիկային մշակաբույսեր: Վերջին տարիներին մասնակի աճել է նաև եգիպտացորենի արտադրությունը:

⇒ **Զբոսաշրջություն**

Այս համայնքները ունեն բավականին հին պատմություն և մեծաքանակ տեսարժան վայրեր՝ բնակելի քարանձավներ, եկեղեցիներ, ամրոցներ և այլ տեսարժան վայրեր, որտեղ զբոսաշրջության զարգացման մեծ պոտենցիալ կա:

3. Համայնքների մրցակցային առավելությունները

3.1 Մրցակցային առավելություններ

- Մարդիկ համախմբված ու միասնական են:
- Հասանելի են հարևան համայնքների մեծաքանակ հողային ռեսուրսները, որոնք օգտագործվում են այս համայնքների բնակիչների կողմից:
- Գտնվում են Գորիս - Ստեփանակերտ ավտոճանապարհի հարևանությամբ:
- Կաթը վերամշակվում է ենթաշրջանում:
- Առկա են հնավայրեր և տեսարժան վայրեր:

4. Անասնապահության վերլուծություն

4.1 Ընդհանուր տվյալներ

Խոշոր եղջերավոր անասնապահությունը բոլոր համայնքներում տնտեսության գերակա ճյուղ է հանդիսանում: Բնակչության մեծ մասը ներգրավված է այս ոլորտում:

Ստորև՝ աղյուսակներ 4.1 և 4.2 –ում, ներկայացված է տնային տնտեսությունների ներգրավվածությունը անասնապահության մեջ՝ ըստ համայնքների, և բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազլխաքանակի:

Աղյուսակ 4.1 Տնտեսությունների ներգրավվածությունը անասնապահության մեջ՝ ըստ համայնքների

	Տնային տնտեսությունների ներգրավվածությունը անասնապահության մեջ			
	Հարթաշեն	Խնձորեսկ	Ն. Խնձորեսկ	Քարաշեն
Անասնապահություն ընդհանուր	95%	90 %	95 %	90 %
Խոշոր եղջերավոր անասնապահություն	90 %	80 %	90 %	60 %

Աղյուսակ 4.2 Տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազլխաքանակի

	Հարթաշեն	Խնձորեսկ	Ն. Խնձորեսկ	Քարաշեն
100 և ավելի գլուխ	3	8	-	-
50 -100 գլուխ	5	32	-	-
20 -50 գլուխ	8	40	6	5
1-20 գլուխ	124	341	41	78
	1054/ 509 կով	4485 / 2150 կով	366 / 160 կով	803/422

Գերակշռում է «կովկասյան գորշ» տեսակը: Միջին կաթնատվությունը 2000 լիտր/տարի է¹, կովերը չեն լիակրթվում:

Հեռագնա արոտի օգտագործումը տարածված է, սակայն առկա է ջրի և էլեկտրաէներգիայի խնդիր, ինչը դժվարություններ է առաջացնում կիթի գործընթացի ավտոմատացման և կովերին խմելու ջրի ապահովման հարցում:

Լիակրթում - տարեկան կտրվածքով ստացվող կաթի մաքսիմալ քանակը, որին հնարավոր է հասնել ճիշտ կերակրման և պահքի միջոցով:

4.2. Շուկայի վերլուծություն

Կաթը ամբողջությամբ մթերվում է համայնքների ներսում և հարևան համայնքներում գործող հիմնականում պանիր արտադրող փոքր արտադրամասերի կողմից: Քարաշենում գործում է 1, Հարթաշենում՝ 4, Խնձորեսկում՝ 5 փոքր արտադրամաս: Կաթը մթերվում է նաև Տեղ և Գորհայք համայնքներում գործող արտադրամասերի կողմից:

Բոլոր արտադրամասերն էլ ունեն տեխնիկական վերազինման և որակական ստանդարտների բարձրացման խնդիր: Արտադրողներից երկուսն են, որ ունեն կաթի ստերիլիզացման հնարավորություն:

Արտադրվում է հիմնականում «Չանախ» տեսակի պանիր, որը հանձնվում է պանրի արտահանմամբ զբաղվող ձեռնարկություններին և վաճառվում է հիմնական հաճախորդներին:

20 գլխից ավելի կով ունեցող ֆերմերները կաթն ամբողջությամբ հանձնում են: Նրանց շատ քիչ մասն է կաթից արտադրում կաթնամթերք՝ իրենց ներքին կարիքների բավարարման համար: 20 գլխից քիչ կով ունեցող տնային տնտեսությունները հանձնում են կաթի 60 %-ը , իսկ մնացածից արտադրում հիմնականում պանիր և յուղ՝ սեփական կարիքների բավարարման և հիմնական փոքր թվով հաճախորդներին վաճառքի համար:

¹ Այս տեսակի կովերի համար կաթնատվության ամենաբարձր ցուցանիշը՝ մոտ 3000 լիտր/տարի:

Շուկայում կաթի միջին գինը 125 դրամ է : Գինը կարող է տարվա ընթացքում տատանվել 5-10 դրամի միջակայքում: Ֆերմերները կաթի բարձր յուղայնության համար լրացուցիչ վարձատրվում են. բոլոր կաթ մթերոդները ունեն յուղայնության, թթվայնության , ջրի բաղադրության ստուգման սարքեր:


Մսի վաճառքն իրականացվում է Գորիս քաղաքի և համայնքների մսավաճառների միջոցով, ովքեր համայնքներից գնում են միսը: Երինջի և հորթի միսը վաճառվում է 1800-2200 դրամով, մնացածը՝ միջինը 1200 դրամով:

Մսի գինը առաջացնում է դժգոհություն ֆերմերների մոտ, ովքեր բողոքում են , որ միսը գնվում է 1200 դրամով և վերավաճառվում՝ 2200 -2400 դրամով: Մսավաճառները մսի գինը հիմնավորում են առաջարկի մեծությամբ:

Ընդհանուր առմամբ չորս համայնքներում արտադրվում է տարեկան 6 500 տոննա կաթ.

- որից 600 տոննա կաթն օգտագործվում է հորթերի կերակրման համար,
- 5 000 տոննա կաթը հանձնվում է,
- 900 տոննա կաթից տնական պայմաններում արտադրվում է պանիր և յուղ՝ սեփական կարիքների և վաճառքի համար:

4.3. Կաթնամթերքի արտադրության արժեզրթայի սխեմատիկ պատկեր



4.4. Մատակարարների հետ հարաբերություններ

Այս հարաբերություններում հիմնական որոշումներ կայացնողները ֆերմերներն են: Մատակարարումը մոնոպոլացված չէ, ինչը թույլ է տալիս ֆերմերներին ընտրել հնարավոր լավագույն տարբերակը: Մինևույն ժամանակ՝ մատակարարվող ծառայությունները և ապրանքները հաճախ բավարար որակ չեն ունենում:

Դժվար հասանելի է մատչելի վարկավորումը: Ուսումնասիրության անցկացման ընթացքում որոշ ֆերմերներ և հողագործներ «լիմիտի սպառման» պատճառով չկարողացան օգտվել շուկայում հասանելի 14 % -ով գյուղ. վարկից (որի 4 % - ը սուբսիդավորվում է պետության կողմից):

Անասնաբուժական ծառայություններ

Համայնքներում հասանելի են անասնաբուժական ծառայությունները: Անասնաբույժները պետ. պատվերի շրջանակներում մատուցում են վակցինացման ծառայություններ: Ընդհանուր առմամբ իրականացվում է վակցինացման 7 միջոցառում:

Օգտագործվող արոտների, այդ թվում՝ հեռագնա, սփռվածությունը (Վայոց ձոր - Լեռնային Ղարաբաղ) բավականին բարդացնում է անասնաբուժական ծառայությունների ժամանակին մատուցումը:

Հասանելի է արհեստական սերմնավորումը: Ֆերմերները հիմնականում չեն օգտվում այդ ծառայությունից, ինչը պայմանավորված է վստահության պակասով: Չի տրամադրվում երաշխիք, հնարավոր է սերմնավորումը արդյուք չտա, ինչից հետո ֆերմերին չի վերադարձվում գումարը, և սերմնավորման ծառայությունից կրկին օգտվելու համար պետք է նորից վճարում կատարել:

Խնձորեսկում CARD հիմնադրամի կողմից կառուցվում է «Անասնապահության աջակցման կենտրոն», որտեղ ֆերմերները կարող են ստանալ խորհրդատվություն, որակյալ ծառայություններ՝ այդ թվում՝ արհեստական սերմնավորման, և ձեռք բերել գյուղատնտեսական մինի սարքավորումներ:

Խտացված կերերի վաճառք

Խտացված կերերը անհատներն են վաճառում համայնքներում: Հիմնականում հասանելի է երեք տեսակի կեր՝

- Թեփ – 150 -170 դրամ,
- Գարի – 150 - 180 դրամ,
- Համակցված կեր – 220 - 260 դրամ:

Ֆերմերները խտացված կերեր հիմնականում չեն գնում՝ փոխարենը սեփական հողատարածքում աճեցնում են հացահատիկ և եգիպտացորեն, ինչը աղացում են և կերակրում անասուններին:

Շուկայում հասանելի են 50 000 դրամ արժողությամբ անասնակերի աղացման սարքավորումներ՝ 300 կգ/ ժամ արտադրական հզորությամբ, որոնք կարող են արագացնել և էժանացնել աղացման գործընթացը:

Սարքավորումներ

Ֆերմերները չեն ավտոմատացնում կթի գործընթացը, ինչ պայմանավորված է հիմնականում հեռագնա արոտներում էլեկտրաէներգիայի բացակայությամբ:

Բոլոր մթերողներն ունեն յուղայնության, թթվայնության և ջրի քանակի ստուգման սարքավորումներ:

Մարդկային ռեսուրսներ

Քիչ թվով նախրապաններ և հովիվներ կան: Մեկ կովի համար նախրապանին ամսական վճարում են՝

- 3000 դրամ՝ ամառվա սեզոնին արածեցնելու համար,
- 5000 - 7000 դրամ՝ արածեցնելու, պահելու և կիթի գործընթացի կազմակերպման համար:
- 3000 դրամ՝ կիթի համար:

Հովիվին մեկ ոչխարի համար ամսական վճարում են 700 դրամ:

Անասնակերի հավաքում

Ֆերմաներին անհրաժեշտ անասնախոտը փոքր ֆերմերների հիմնական մասը հավաքում է սեփական միջոցներով (ֆերմերների 80%-ը ունեն սեփական տեխնիկա՝ խոտհնձիչներ, բեռնատարներ և այլն): Խոտհարքերը բավարարում են անասնախոտի ներքին պահանջարկը: Կան մեխանիզատորներ, ովքեր հավաքում են խոտը և վաճառում համայնքներից դուրս:

Խոշոր ֆերմերները գնում են նաև անասնախոտ. սեփական միջոցներով հնարավոր չէ հավաքել և պահեստավորել անհրաժեշտ քանակությունը:

Հանդամիջյան ճանապարհները պարբերական բարեկարգման կարիք ունեն, ինչն էական ազդեցություն ունի հավաքվող խոտի քանակի վրա:

Հավաքված խոտի ինքնարժեքը կախված է հավաքման գործընթացում սեփականատիրոջ ունեցած տեխնիկայից և ներգրավվածությունից:

Մեխանիզատորը, ով վճարում է մենակ հակավորման համար, իսկ մնացած աշխատանքները իրականացնում է ինքնուրույն՝ սեփական տեխնիկայով, մեկ հակի (20 կգ) համար ծախսում է 250 դրամ:


Աշխատանքների ամբողջական պատվիրման դեպքում մեկ հակը կարող է արժենալ 600 -700 դրամ կախված հեռավորությունից: Շուկայում մեկ հակը վաճառվում է 800 - 900 դրամով:



4.5. Անասնապահության ոլորտում ծախսային հաշվարկ (20 կով)²

Ստորև ներկայացված է 20 կովի հաշվով մեկ տարվա ընթացքում կատարվող ծախսերը և հիմնական գործընթացը: Գործընթացը սկսել ենք հաշվարկել մայիս ամսվանից:

Ա. Ֆերմերը չի մասնակցում անասնակերի հավաքման գործընթացին:




Ընդամենը ծախս - 3 970 000 դրամ

Եկամուտ - 5 340 000 դրամ (2000 լ կաթ x 20 կով x 120 դրամ + 18 հորթ x 30 000 դրամ)

Շահույթ - 1 370 000 դրամ:

² 20 կովը մինիմալ գլխաքանակն է, որից հետո միայն տնտեսությունը սեփական եկամուտներով կարող է ընդլայնվել՝ միաժամանակ բավարարելով ընտանիքի նվազագույն ծախսերը:

Բ. Ֆերմերը մասնակցում է անասնակերի հավաքման գործընթացին:



Ընդամենը ծախս - 2 263 000 դրամ

Եկամուտ - 5 340 000 դրամ (2000 լ կաթ x 20 կով x 120 դրամ + 18 հորթ x 30 000 դրամ)

Շահույթ - 3 077 000 դրամ³:

³ Եթե հացահատիկը , հետևաբար նաև ծղոտը արտադրում է ֆերմերը, ապա շահույթի գումարը աճում է մոտ 30 % -ով:

5. Ոչխարաբուծություն

Ոչխարաբուծությունը ևս այս համայնքների տնտեսության գերակա ճյուղերից է: Ստորև ներկայացված է տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնագլխաքանակի:

Աղյուսակ 5.1. Տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնագլխաքանակի

	Հարթաշեն	Խնձորեսկ	Ն. Խնձորեսկ	Քարաշեն
300 և ավելի	-	6	1	4
150 - 300 գլուխ	1	10	-	2
100 - 150 գլուխ	1	25	2	18
1-100 գլուխ	6	12	1	114
	980	6500	875	3127

Ոչխարները հիմնականում չեն կթվում, ինչը պայմանավորված է կիթի բարդությամբ: Վաճառում են գառներ՝ 35 000 – 40 000 դրամով:

Արտադրվում է փոքր քանակությամբ ոչխարի պանիր, ինչը վաճառվում է հիմնական հաճախորդներին:

Համայնքում արտադրվում է տարեկան մոտ 20 տ բուրդ, որը չի վաճառվում: Սովետական տարիների գործել են ոչխարների լողացման կետեր, որոնց վերագործարկումը ևս էական ազդեցություն կունենա ոչխարաբուծության զարգացման վրա:

Ստորև ներկայացված է 50 գլուխ ոչխար ունեցող ֆերմայի համար ծախսերի և եկամուտի հաշվարկը:

- ✚ 700 դրամ (հովվին վճարվող 1 ոչխարի համար վարձատրություն) x 50 x 12 ամիս = 420 000 դրամ,
- ✚ 2 տ խտացրած կեր = 300 000 դրամ,
- ✚ 200 խոտի հակ = 180 000 դրամ,
- ✚ Այլ ծախսեր - 100 000 դրամ,
- ✚ **Ընդամենը – 1 000 000 դրամ:**

Եկամուտ

- ✚ 50 գառ x 40 000 դրամ = **2 000 000 դրամ,**

Շահույթ

- ✚ **1 000 000 դրամ:**

Նախաձեռնություն.
Համայնքներում
ցանովի
խոտհարքների և
անասնակերի
արտադրության
հոսահոսում

6. Անասնապահության արդյունավետության բարձրացման հնարավորություններ

6.1 Լիակթում և ցանովի խոտհարքերի տարածքների ավելացում

Կովկասյան գորշ տեսակի լիակթման ցուցանիշը 3000 լիտր/տարի է:

Լիակթման վրա ազդող հիմնական գործոնը կերակրումն է. կերամիավորի նորման օրական կազմում է 9-10 կերամիավոր: Ձմեռվա ամիսներին կովին տրվող կերը մոտ 5 կերամիավոր է պարունակում (երկու անգամ պակաս նորմայից), ինչը և բերում է կաթնատվության անկման: Ստորև ներկայացված է կերամիավորների պարունակությունը՝ ըստ հաճախ օգտագործվող կերատեսակների.

Տեսակ	1 կգ-ի հաշվարկով կերամիավորը
Խոտ առվույտի	0,52
Ծղոտ գարու	0,36
Քուսպ արևածաղկի	1,1
Եգիպտացորեն	1,1
Թեփ ցորենի	0,7
Թեփ գարու	0,7
Կարտոֆիլ	0,3

Մեկ կովի հաշվով 10 կերամիավորը ապահովելու համար ֆերմերը պետք է կատարի օրական 250 դրամի ծախս, եթե ֆերմերն ինքն է զբաղվում հողագործությամբ, կամ 650 դրամի ծախս, եթե ձեռք է բերում շուկայից:

Ստորև ներկայացված է լիակթման դեպքում եկամտի և ծախսերի փոփոխությունը:

	Ֆերմերը գնում է լրացուցիչ կեր	Ֆերմերն արտադրում է լրացուցիչ կեր
Ծախս	650 դրամ x 180 օր = 117 000 դրամ	250 դրամ x 180 օր = 45 000 դրամ
Կաթնատվության բարձրացում	800 լ	800 լ
Եկամուտ	800լ x 125 դրամ = 100 000 դրամ	800լ x 125 դրամ = 100 000 դրամ
Լրացուցիչ շահույթ	- 17 000 դրամ	55 000 դրամ
20 կովի համար	- 340 000 դրամ	900 000 դրամ

Վերը նշված աղյուսակից ակնհայտ է, որ լրացուցիչ կերի գնման դեպքում ֆերմերը վնասվելու է, իսկ տեղական արտադրության դեպքում հնարավոր է ստանալ 900 000 դրամի լրացուցիչ շահույթ:

Ստորև ներկայացված է կլթու կովերի կերակրման օրինակելի կերաբաժինը.

Օրական կիթը/ կգ	Օրական մեկ գլխի հաշվարկով, կգ						
	խոտ	ծղոտ	սիլոս	սենաժ	արմատա-պտուղներ	խտացրած կերեր	աղ / գրամ
6	6	2	8	2	-	1.5	55
8	6	2	12	2	2	2	57
10	6	2	12	3	5	5	65
12	7	2	12	3	6	6	73
14	7	2	13	3	8	8	81
16	7	2	13	3	10	10	89

Ցանովի խոտհարքի բարձր բերքատվության և կերամիավորի բարձր մակարդի շնորհիվ ևս հնարավոր է բարձրացնել կաթնատվության մակարդակը:

Բնական և ցանովի կերահանդակների համեմատական ցուցանիշներ

Կերի տեսակը	Բերքատվությունը (g/հա)	Ընդամենը կերամիավոր (g)	Կերի ծախսը 1 g կաթի հաշվարկով (g/կ.մ.)	Կաթ (g)	Միս (կգ)
Առվույտի խոտ	75	39	1.1	35.45	410
Կորնզանի խոտ	65	35	1.1	31.8	368
Վարսակի խոտ	40	19.2	1.1	17.45	202
Բնական խոտ	18	8.1	1.1	8	100

6.2. Հեռագնա արոտների և արոտավայրերի արդյունավետ օգտագործում

Բոլոր համայնքներում առկա է արոտավայրերի ջրաբխացման անհրաժեշտություն: Ջրի աղբյուրին հասնելու համար նախիրը անցնում է օրական 15- 20 կմ ճանապարհ, ինչը բացասական է ազդում կաթնատվության վրա: Արոտավայրերում ջրի առկայությունը թույլ կտա 25 – 30%-ով բարձրացնելու կաթնատվության ցուցանիշը համայնքներում:

Համայնքներում շատ քիչ թվով ֆերմերներ են հեռագնա արոտներից օգտվում, ինչը պայմանավորված է ջրի և էլեկտրաէներգիայի բացակայությամբ: Ֆերմերներին կթի սարքավորումների և փոքր ագրեգատների ձեռքբերման հնարավորությունը թույլ կտա հեռագնա արոտներում ունենալ էլեկտրաէներգիա, հետևաբար՝ ապրելու համար առավել բարեկեցիկ պայմաններ, ջրի տաքացման և ավտոմատ կիթի հնարավորություն:

Կթի ավտոմատացման անհնարինությունը ազդում է նաև անասնազվաքանակի աճի վրա, քանի որ սեփական ուժերով հեռագնայում ֆերմերները հնարավորություն չունեն կթելու մեծաքանակ թվով կովերի:

6.3 Կաթնատու տոհմային անասունների բուծում և ծնելիության պլանավորում

Անասնապահության արդյունավետության բարձրացման եղանակներից է նաև արհեստական սերմնավորմամբ կաթնատու տոհմային սորտերի ստացումը:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի տեսակները հնարավոր է ստանալ արհեստական սերմնավորման եղանակով՝ առանց ծնելիության հետ կապված խնդիրների:

Այս երեք տեսակների կաթնատվությունը հետևյալն է՝

- Շվից, Հոլշտեյն - 6000 - 8000 լիտր (յուղի պարունակությունը 3.5)
- Ջերսի - 4 000 լիտր (յուղի պարունակությունը 6.0)

4 սերնդավորություն է անհրաժեշտ հիմնական տոհմին շատ մոտ տեսակ ստանալու համար, որոնց կաթնատվության աճը ներկայացված է ստորև:

Ֆերմերների մոտ տարածված է այն կարծիքը, որ արհեստական սերմնավորման դեպքում կովկայան գորշ տեսակը չի կարող ծնել հորթը:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի ցեղատեսակները բավարարում են **ծնելիության դյուրինության գործակցին**, ինչը ենթադրում է սորտավորության ընթացքում ծնելիության հետ կապված խնդիրների բացակայություն:

Սերունդ	Անվանում	Մակսիմալ կաթնատվություն	Թույլատրվում է հեռագնա արոտավայր տանել
Առաջին	F1	3000	Այո
Երկրորդ	F2	4000	Այո
Երրորդ	F3	5000	Ոչ
Չորրորդ	F4	60000 - 8000	Ոչ

Միևնույն ժամանակ արհեստական սերմնավորումը թույլ կտա պլանավորել կովերի ծնելիության ժամկետը, ինչը թույլ կտա ամբողջ տարվա ընթացքում ունենալ կաթի ստաբիլ արտադրություն:

6.4 Կաթի մթերում, կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն

Կաթի մթերման գործընթացը կազմակերպվում է հիմնականում մթերող արտադրամասերի կողմից, որոնք մթերում են կաթը սեփական մեքենաներով: Ֆերմերներն իրենք էլ են տեղափոխում կաթը:

Կաթի որակի վրա բացասական է ազդում երեկոյան կիթի ու մթերման

ժամանակահատվածի 4-5 ժամ տարբերությունը, որի ընթացքում բարձրանում է թթվայնության աստիճանը:

Հավաքման կետերի առկայությունը (շարժական, շենքային) թույլ կտա մթերման գործընթացը դարձնել ավելի արդյունավետ՝ թե որակական և թե գնային ու քանակական առումներով:

Համայնքներում անհրաժեշտ են նաև որակյալ կաթնամթերք և մսամթերք արտադրող արտադրամասեր, որոնք կկարողանան մրցունակ արտադրանք թողարկել ինչպես ներքին շուկայում, այնպես էլ՝ արտաքին շուկաներում:

Նախաձեռնություն. տեղական կաթնամթերքի և մսամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն, որակի միասնական ստանդարտների մշակում: Գործող արտադրամասերի որակի ստանդարտների և փաթեթավորման ներդրման աջակցություն:

Նախաձեռնություն. տեղական շարժական և ստացիոնար հավաքման կետի հիմնման աջակցություն:

7. Նախաձեռնություններ կաթնամթերքի արժեշղթայում

- Անասնակերի տեղական արտադրության խթանում:
- Արոտավայրերի ջրաբքիացման և էլեկտրաֆիկացման օժանդակություն:
- Անասնաբուժական, արհեստական սերմնավորման և սարքավորումների մատակարարման որակյալ մասնավոր կենտրոնի հիմնում:
- Տեղական շարժական և/կամ ստացիոնար կաթի հավաքման կետի հիմնման աջակցություն:
- Տեղական կաթնամթերքի և մսամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն, որակի միասնական ստանդարտների մշակում:
- Ոչխարների լողացման կետերի վերանորոգման աջակցություն:
- Տեխնիկական օժանդակություն, ապրանքի առաջ մղում շուկաներում, կաթնամթերքի և մսամթերքի արտահանմանն ուղղված քաղաքականություն:

8. Հողագործության վերլուծություն

Հողագործությունը ևս տարածված է համայնքներում: Հիմնականում ցանվում է հացահատիկ և բազմամյա խոտաբույսեր:

Տնային տնտեսությունների ներգրավվածությունը հողագործության մեջ				
Տնտեսության հիմնական բլոկներ	Հարթաշեն	Խնձորեսկ	Ն. Խնձորեսկ	Քարաշեն
Հողագործություն	70 %, որից խոտաբույսեր՝ 30 %, հացահատիկ՝ 40 %	70 %, որից խոտաբույսեր՝ 30 %, հացահատիկ՝ 40 %	95 %, որից խոտաբույսեր՝ 15%, բանջարեղեն՝ 5%, հացահատիկ՝ 80 %	հացահատիկ՝ 90 %

Հողերը պարբերաբար լաբորատոր ստուգում են անցնում, որը կազմակերպվում է ՏԻՄ -երի կողմից: Պարարտացվում է հիմնականում ազոտական պարարտանյութով: Փորձեր են արվում օգտագործելու այլ տեսակի պարարտանյութեր (ֆոսֆորական, կալիումական, այլ), սակայն շուկայում շատ բարդ է ձեռք բերել այլ տեսակի պարարտանյութ: Հողագործները որոշ մասը ներկրում են Լեռնային Ղարաբաղից:

Տարածված է նաև գոմաղբով հողերի պարարտայնացումը: Հիմնականում աճեցվում է ցորեն և գարի, որոնց սերմացուները ձեռք են բերվում Գյուղնախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրի շրջանակում:

Հողագործները բողոքում են սերմի որակից՝ լավագույն բերքատվությունը չի անցնում 30 ցենտները մեկ հեկտարի հաշվարկով:

Ստորև ներկայացված է 1 հա աշնանացան ցորենի վրա կատարվող ծախսերը.

	Անվանում	Պահանջվող քանակ	միավորի արժեքը դրամով	Ընդամենը
1.	1 –ին կարգի ցորենի սերմ	300 կգ	160	48 000
2.	Սերմի աղտահանիչ	0,45 լ	6 000	2 700
3.	Մկնդեղ	0,3 կգ	4 000	1 200
4.	Ազոտական պարարտանյութ	300 կգ	120	36 000
5.	Հարբեցիտ, քաղհանի փոխարեն	1 լ	3 500	3 500
Դիզվառելիք / գործողություններ + ճանապարհածախս				
6	Վար	30 +10 լ	350	14 000
7	Կուլտիվացիա	15 +10 լ	350	8 750

8	Ցանք	10 + 10 լ	350	7 000
9	Պար. տեղ. , N սնուցում	5 + 10 լ	350	5 250
10	Քաղհան /ամինային աղ	5 + 10 լ	350	5 250
11	Հունձ	20 լ	350	7 000
Օտայության վարձավճար				
12	Վար	1 հա	10 000	10 000
13	Կուլտիվացիա		4 000	4 000
14	Սերմի տեղափոխում			5 000
15	Սերմի բարձում և շարքացան լցնել			2 000
16	Ցանք		4 000	4 000
17	Պարարտացում		1 500	1 500
18	Քաղհան		2 000	2 000
19	Հունձ		10 000	10 000
20	Բերքի տեղափոխում			7 000
21	Բերքի գտում	3 տ	2 000	6 000
22	Պահեստավորում	3 տ	1 500	4 500
23	Անուղղակի ծախսեր			9 700
24	Ընդամենը ծախս			204350
25	Նախատեսված բերքը միջինով	30 g	135	405 000
26	Զուտ եկամուտ			200 650

Բազմամյա խոտաբույսերի մշակումը ևս համայնքում բավականին տարածված է: Ցանովի խոտաբույսերի բարձր բերքատվության շնորհիվ հնարավորություն է ստեղծվում միավոր տարածության հաշվով ավելի շատ անասնախոտ ստանալ: Միևնույն ժամանակ վարելահողերում ցանվող մշակաբույսերի տեսակների փոփոխությունը չի որակագրկում հողը, ինչն ապահովում է համեմատաբար բարձր բերքատվություն:

Առվույտի և կորնզանի ցանքը հիմնականում կատարվում է գարնանացան հացահատիկների՝ գարու և հաճարի հետ: Առաջին տարում ստացվող բերքը փոխահատուցում է կատարված ծախսերը և սկսած երկրորդ տարվանից՝ խոտադաշտերը կատարված ծախսերի ցուցանիշներով գրեթե հավասարվում են բնական խոտհարքի վրա կատարված ծախսերին՝ միևնույն ժամանակ ապահովելով 3-4 անգամ բարձր բերքատվություն և կերամիավորների քանակ:

Խոտի հավաքման ծախսերի համեմատական ցուցանիշներ (չի ներառում տեղափոխումը)

Տեսակը	Բերքատվությունը ց/հա	Հավաքման ծախսերը հա/դրամ	Այդ թվում				1 կգ խոտի հաշվով կատարվող ծախսը	1 հակի (20կգ) հաշվով կատարվող ծախսը
			Խոտհունձ	Փոցխ	Հակավորում	Այլ		
Առվույտ	75	98250	15000	7000	56250	20000	13	262
Կորնզան	65	90750	15000	7000	48750	20000	14	279
Վարսակ	40	72000	15000	7000	30000	20000	18	360
Խոտհարք	18	46500	10000	4000	13500	14000	26	517

Բերքատվության վրա ուղղակի ազդեցություն ունի գյուղ. ծառայությունների որակը: Համայնքներում առկա է բավարար քանակությամբ գյուղ. տեխնիկա, ինչը բավականին հնամաշ է:

9. Նախաձեռնություններ հողագործության ոլորտում.

- Կրծողների դեմ միասնական պայքարի իրականացում:
- Գյուղատեխնիկայի թարմացման աջակցություն:
- Անջրդի հողերում բարձր բերքատվություն ունեցող մշակաբույսերի սերմերի ներկրման աջակցություն:
- Ոռոգման ջրագծերի կառուցման աջակցություն:
- Հացահատիկի որակյալ սերմերի ներկրման աջակցություն:
- Հացահատիկի չորանոցի հիմնման աջակցություն:
- Անասնակերի փոքր աղացների ձեռք բերման աջակցություն:
- Որակյալ ոչ ազոտական պարարտանյութերի ձեռք բերման աջակցություն:

10. Չբոսաշրջության վերլուծություն

Հարյուրավոր բնակելի քարանձավները, որոնք բնակեցված են եղել մինչև անցած դարի կեսերը, Աղջկա բերդ ամրոցը, Խնձորեսկի բերդը, որը կոչվում է նաև Մխիթար Սպարապետի ամրոց, Սուրբ Թադևոս եկեղեցին, Անապատ եկեղեցին, Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, այլ տեսարժան վայրերն ու անկրկնելի բնությունը զբոսաշրջության զարգացման ամուր հիմք են ստեղծում:

Այս վայրերում մշտապես կարելի է տեսնել զբոսաշրջիկների թե՛ Հայաստանի այլ մարզերից, թե՛ արտասահմանից:

2012 -ին Խնձորեսկում կառուցվեց 160 մ երկարությամբ ճոճվող կամուրջ, որը ևս կարևոր նշանակություն ունեցավ զբոսաշրջիկների հոսքի համար:

Տարեկան 15 000 - 20 000 տուրիստ է այցելում՝ տեսնելու այս վայրերը:

Ունենալով տուրիզմի զարգացման նման հնարավորություն՝ գյուղը չի առաջարկում լրացուցիչ ծառայություններ զբոսաշրջիկներին, ինչի հետևանքով զբոսաշրջիկները լավագույն դեպքում փոքր քանակությամբ գնումներ են կատարում գյուղի խանութներից՝ ջուր, այլ զովացուցիչ խմիչքներ, պաղպաղակ և այլն:



Համայնքում չկան հյուրանոցներ և հյուրատներ, հասարակական սննդի օբյեկտներ և հուշանվերների խանութներ:

Բացի տեսարժան վայրեր այցելությունից, այս պահին համայնքում հնարավոր չէ առաջարկել գիշերակացի, սննդի, ժամանցի, գնումների հետ կապված ծառայություններ, որոնք կարող են զբոսաշրջիկներին ավելի երկար պահել գյուղում:

Բարենտրոգման կարիք ունի գյուղի միջով դեպի կախովի կամուրջ տանող ճանապարհը, ինչի վատթար լինելը ստիպում է զբոսաշրջիկներին այցելել հնավայրեր այնտրանքային ճանապարհով՝ առանց գյուղի մեջ մտնելու:

Նախաձեռնություն. Խնձորեսկում տուրիզմի զարգացման ռազմավարության ստեղծում, ՏԻՄ-ի հետ սերտ համագործակցություն՝ ռազմավարությամբ սահմանափակ գործողությունների իրականացման մասով:

Այս ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է «Տուրիզմի զարգացման ռազմավարության մշակում»:

Շնորհակալություն ենք հայտնում Հարթաշեն, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Քարաշեն համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցման համար:

